

# Ռուս մշակութային փառանքի օսկոցկիի բանախօսուքիւնը Ղարաբաղի մասին

Հայաստաննայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի երիտասարդաց կազմակերպութիւնը, ուրբաթ, ապրիլ 26-ին, Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսասրահին մէջ, կազմակերպեց բանախօսական երեկոյ մը՝ Ղարաբաղի ներկայ կացութեան մասին: Բանախօսն էր պրն. Վալենտին Օսկոցկին՝ հիմնադիրներէն եւ ատենապետներէն ռուս մտավորականներու կողմէ վերջերս կազմուած «Ղարաբաղ» յանձնախումբի: Պրն. Օսկոցկի, որ վերջին շրջանին այցելած էր Ղարաբաղ, ներկայ մեծաթիւ ու հետաքրքրի հասարակութեան նկարագրեց այժմու ողբալի կացութիւնը պատմական Հայաստանի այդ շրջանին:

Պրն. Օսկոցկին անդամ է Խ. Միութեան գրողներու «Ապրիլ» միութեան, որ իր անունը առած է այն ամիսէն, երբ նախագահ Միխայիլ Գորբաչով յայտարարեց այսպէս կոչուած «պերեստրոյկա» քարեկարգութիւնը: Պրն. Օսկոցկիի հետաքրքրութիւնը Ղարաբաղի մասին կը թխի «Ապրիլ» խումբի զլխատր նպատակակէտէն, որ է զօրավիգ կանգնիլ Խ. Միութեան մէջ զանազան անկախութեան շարժումներուն: 1991 մարտին, «Ապրիլ» միութիւնը գրողներու խումբ մը դրկեց Ղարաբաղ՝ տեղւոյն կացութեան իրականութիւնը ի յայտ բերելու առաքելութեամբ:

Այդ առաքելութեան արդիւնքը եղաւ «Ղարաբաղի յանձնախումբը», որ պաշտօնապէս կազմուեցաւ 1991 մարտ 20-ին, ուր Օսկոցկիէն զատ՝ կան ուրիշ 17 հիմնադիր անդամներ եւ յանձնախումբի անդամակցութիւնը հետզհետէ կ'աւելնայ:

Բանախօսութեան ամենէն յուզիչ պահերուն մէկուն ընթացքին պրն. Օսկոցկին արտայայտուեցաւ իր անձնական քարե-

կամութեան մասին քնիկ ղարաբաղցի զըրող Լէոնիդ Հուրունցի հետ: Համաձայն բանախօսին, Հուրունց իր կեանքի վերջին տասը տարիները անցուց խօսելով Ղարաբաղի ահաւոր կացութեան եւ հայերուն դէմ հետզհետէ աճող քաղաքական եւ ֆիզիքական ընդդիմութեան մասին:

Հայաստան քաղաքականապէս բակարդի մէջ ինկած է Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ, հայերը պէտք է որոշեն, որ քաղաքական կերպով մաս պիտի կազմեն համադաշնակցութեան, թէ՛ անկախ պիտի ըլլան: Որպէս ռուս մտավորական ան զօրավիգ պիտի կանգնի որեւէ որոշումի եւ պիտի պայքարի այդ որոշումը արգիլող որեւէ փորձի եւ ուժի դէմ:

Ներկաները շատ ազդուած էին պրն. Օսկոցկիի Ղարաբաղ ճամբորդութեան նրկարագրութիւններէն: Տեղի ունեցած հարցապատասխանի ընթացքին ունկնդիրները ոչ միայն հետաքրքրութիւն ցուցաբերեցին, այլ նաեւ իրենց զօրակցութիւնը Ղարաբաղի հայ բնակիչներու պայքարին: Անոնք հարցուցին նաեւ Խ. Միութեան ապագային մասին, մասնատրաբար թէ ի՞նչ կարելի է ընել քարելաւելու համար Ղարաբաղի կացութիւնը:

Հայց. եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամեան կատարեց փակման խօսքը, շնորհակալութիւն յայտնելով պրն. Վալենտին Օսկոցկիին եւ անոր միջոցաւ քարի կամեցողութիւն ցուցաբերող անհատներուն Խ. Միութեան եւ Ամերիկայի մէջ, որոնք խոր կարեկցութիւն յայտնաբերած են Ղարաբաղի հայերուն եւ միասնական կեցուածք մը անոնց պայքարին հանդէպ: